Հավելված
ՀՀ կառավարության 2009 թվականի
հուլիսի 23 -ի N 855 - Ն որոշման

Կ Ա Ր Գ

ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՄԲ ԶԲԱՂՎՈՂ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԵՎ ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐԵՐԻ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՍՏՈՒԳՄԱՆ

1. Սույն կարգի դրույթները վերաբերում են քաղաքաշինության բնագավառում լիցենզավորման ենթակա գործունեությամբ զբաղվող իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի մասնագետներին (այսուհետ՝ մասնագետ):

2. Քաղաքաշինության բնագավառում մասնագետները որակավորվում են ըստ հետևյալ բնագավառների՝

1) շինարարության որակի տեխնիկական հսկողություն՝ ըստ քաղաքաշինության հետևյալ ոլորտների՝

ա. բնակելի (բացառությամբ ոչ ձեռնարկատիրական նպատակով կառուցվող անհատական բնակելի տների, ավտոտնակների, օժանդակ շինությունների, ինչպես նաև շինարարության թույլտվություն չպահանջող աշխատանքների), հասարակական և արտադրական (բացառությամբ շինարարության թույլտվություն չպահանջող աշխատանքների),

բ. տրանսպորտային,

գ. հիդրոտեխնիկական,

դ. էներգետիկ,

ե. կապի.

2) ինժեներական հետազննում.

3) շենքերի և շինությունների տեխնիկական վիճակի հետազննություն:

3. Որակավորման ստուգման համար մասնագետները որակավորման ստուգումից առնվազն 10 օր առաջ որակավորման ստուգման հանձնաժողով (այսուհետ՝ հանձնաժողով) են ներկայացնում հետևյալ փաստաթղթերը՝

1) անձնագրի պատճենը.

2) աշխատանքային գրքույկի պատճենը.

3) բարձրագույն կրթության դիպլոմի պատճենը.

4) 3 x 4 սմ չափսերի երկու գունավոր լուսանկար։

4. Որակավորման ստուգումն իրականացնում է Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարի կողմից ստեղծված հանձնաժողովը։ Հանձնաժողովը կազմված է 5 անձից՝ նախագահից, նախագահի տեղակալից, քարտուղարից և անդամներից։

5. Հանձնաժողովը՝

1) կազմակերպում է մասնագետների որակավորման ստուգման աշխատանքները.

2) որոշում է մասնագետների որակավորման ստուգման անցկացման վայրը, օրը, ժամը և դրա մասին տալիս է հայտարարություն.

3) ընդունում է որակավորման ստուգման մասին եզրակացություն.

4) քննում է մասնագետների բողոքները՝ կապված ստուգման կազմակերպման և ստուգման արդյունքների հետ.

5) իրականացնում է սույն կարգով նախատեսված այլ լիազորություններ։

6. Որակավորման ստուգման անցկացման վայրի, օրվա և ժամի մասին մասնագետներն ու հանձնաժողովի անդամները տեղեկացվում են քննությունից առնվազն 7 օր առաջ։

7. Որակավորման ստուգումն իրականացվում է հայերենով, դռնբաց կարգով։ Որակավորման ստուգման ընթացակարգը կարող է տեսագրվել, ձայնագրվել կամ նկարահանվել։

8. Որակավորման ստուգումը կատարվում է գրավոր, քննական հարցաթերթիկներով (թեստերով)՝ հաստատված հանձնաժողովի նախագահի կողմից։ Որակավորման ստուգման

հարցերը նախապատրաստվում են լիցենզավորող մարմնի կողմից և ենթակա են պարտադիր հրապարակման՝ ստուգման օրվանից ոչ ուշ, քան վեց ամիս առաջ:

9. Որակավորման ստուգումը տեխնիկական միջոցներով իրականացվելու դեպքում մասնագետին հանձնաժողովի քարտուղարը մինչև որակավորման ստուգումն սկսելը պետք է տեղեկացնի իրավական կամ այլ փաստաթղթերից կամ տեխնիկական միջոցներից օգտվելու կարգի և պայմանների հետ:

10. Թեստավորման առաջադրանքները բաղկացած են հարցերից և խնդիրներից: Յուրաքանչյուր հարց (խնդիր) պետք է ունենա երեք կամ չորս ենթադրյալ պատասխան: Յուրաքանչյուր հարց (խնդիր) պետք է ունենա մեկ միանշանակ ճիշտ պատասխան:

11. Որակավորման հարցաթերթիկները պետք է ներառեն 50 հարց, որից՝

1) 40 հարց՝ համապատասխան ոլորտը կարգավորող նորմատիվատեխնիկական և քաղաքաշինական փաստաթղթերից,

2) 10 հարց՝ քաղաքաշինության ոլորտը կարգավորող օրենսդրությունից:

12. Թեստավորման առաջադրանքների լուծման համար տրվում է 60 րոպե ժամանակ:

13. Որակավորման ստուգման արդյունքները գնահատում է հանձնաժողովը: Իննսուն տոկոս հարցերին ճիշտ պատասխանած մասնագետը համարվում է որակավորման ստուգումն անցած:

14. Հանձնաժողովն իր աշխատանքը կազմակերպում է նիստերի միջոցով: Հանձնաժողովի նիստերն իրավազոր են, եթե դրանց մասնակցում են հանձնաժողովի անդամների կեսից ավելին:

15. Հանձնաժողովի նիստերը վարում է հանձնաժողովի նախագահը, նրա բացակայության դեպքում՝ հանձնաժողովի նախագահի տեղակալը: Հանձնաժողովի նիստերն արձանագրվում են: Արձանագրությունն ստորագրում են հանձնաժողովի նախագահը և քարտուղարը:

16. Որակավորման ստուգման արդյունքներն ամփոփվում են եզրակացությամբ:

17. Որակավորման ստուգման մասին եզրակացությունն ստորագրվում է հանձնաժողովի նիստին մասնակցող անդամների կողմից։

18. Հանձնաժողովը ստուգումների արդյունքներն ամփոփում է դռնփակ։ Հանձնաժողովի եզրակացությունը հրապարակվում է։ Ստուգումների արդյունքների մասին մասնագետին պատշաճ ձևով հայտնվում է, կամ դրանք նրան են ուղարկվում ոչ ուշ, քան ստուգումների ավարտի օրվան հաջորդող հինգ օրվա ընթացքում։

19. Որակավորման ստուգման արդյունքները կարող են բողոքարկվել վերադասության կամ դատական կարգով՝ դրանք ստանալուց հետո 10 օրվա ընթացքում։

20. Որակավորման ստուգմանը չներկայացած մասնագետներն իրավունք ունեն մասնակցելու հաջորդ ստուգմանը։

21. Որակավորման ստուգման դրական արդյունքների դեպքում մասնագետին տրվում է որակավորման վկայական՝ անժամկետ։ Որակավորման ստուգման դրական արդյունքների գործողության ժամկետը կարող է սահմանափակվել միայն օրենքով։

22. Որակավորման վկայականում նշվում են՝

1) որակավորման վկայականի համարը.

2) որակավորման ստուգում անցած մասնագետի անունը, ազգանունը, հայրանունը.

3) որակավորման վկայական տվող մարմնի անվանումը.

4) որակավորման վկայականը տալու օրը, ամիսը, տարեթիվը.

5) որակավորման բնագավառը։

23. Որակավորման վկայականի վրա փակցվում է ստուգում անցած անձի գունավոր լուսանկարը։

24. Որակավորման վկայականը վավերացվում է Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարի ստորագրությամբ և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարության՝ Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերով կնիքով։

25. Որակավորման վկայականի ձևը հաստատում է Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարը։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ